Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2025թ. Ապրիլի 5-ից 7-ը Սյունիքի մարզ, ք. Ագարակ և ապրիլի 7-ին Իրանի Իսլամական Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**
   Արայիկ Ստեփանյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ</u>**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ:

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>**
   Սյունիքի մարզ, ք. Ագարակ ապրիլի 5-ից 7-ը ներառյալ, իսկ ապրիլի 6-ին մեկ օրով մուտք Իրանի Իսլամական Հանրապետություն:

4. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)</u>**
   Գործուղումը իրականացվում է իրանական բեռնափոխադրողների համար սահմանված ճանապարհատուրքերի նվազեցման համար իրանական կողմի առաջարկության շրջանակում քննարկումներ իրականացնելու, հայաստանյան բեռնափոխադրողների կողմից ԻԻՀ-ի մաքսային սահմանը հատելու ընթացքում կատարվող վճարումները գույքագրելու և հայաստանյան կողմից սույն առաջարկի վերաբերյալ ամբողջական դիրքորոշում ձևավորելու նպատակով:

5. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**
   Հանդիպմանը մասնակցում էին ԻԻՀ-ում ՀՀ դեսպանատան աշխատակիցներ, ՀՀ ՊԵԿ պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային սպասարկման և հսկողության թիվ 14 բաժնի պետը, Իրանի Իսլամական Հանրապետության Նորդուզի մաքսակետի պետը, մաքսային տերմինալի ղեկավարը և տեղակալը, Հայաստանի Հանրապետությունում ԻԻՀ հյուպատոսը /նստավայրը՝ Կապան/:

   Մինչ քննարկումները հայաստանյան պատվիրակության կողմից ուսումնասիրություն իրականացվեց Նորդուզ մաքսային կետում հայկական տրանսպորտային միջոցների նկատմամբ իրանական մաքսային ծառայությունների կողմից իրականացվող գործողությունների, գանձվող վճարների վերաբերյալ: Գույքագրվեցին գանձվող բոլոր գումարները և հայաստանյան բեռնափոխադրողների կողմից ներկայացված բողոքները և առաջարկությունները:

Սույն գործողությունները իրականացվեցին նույն օրը իրանական կողմի հետ հանդիպման ժամանակ հայաստանյան բեռնափոխադրողների շահերը պաշտպանելուն ուղղված առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

7. <u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>

Իրանական պատվիրակության հետ հանդիպումը կայացավ 2025 թվականի ապրիլի 6-ին՝ Նորդուզում: Հայաստանի Հանրապետությունում ԻԻՀ հյուպատոսը ներկայացրեց իրանական կողմի առաջարկությունը՝ իրանական բեռնափոխադրողների կողմից Հայաստանի Հանրապետություն մուտքի և բեռնափոխադրումների իրականացման համար գանձվող 152 հազար դրամը նվազեցնելու և, ըստ իրենց կարծիքի՝ երկկողմանի գանձվող գումարները հավասարեցնելու համար: Ներկայացվեց, որ իրանական կողմը հայաստանյան բեռնափոխադրողներից գանձում է 120 դոլլար և գանձվող գումարը կախված չի ԻԻՀ -ում անցած ճանապարհի երկարության և բեռնատարի քաշի հետ, իսկ հայաստանյան կողմը նույնատիպ բեռնատարներից գանձում է 152 հազար դրամ, որը հավասար պայմաններ չի ապահովում երկու երկրների բեռնափոխադրողների համար: Իրանական կողմից առաջարկվում է նվազեցնել հայաստանյան կողմից գանձվող 152 հազար դրամը՝ դարձնելով 120 դոլլարին համարժեք:

Հայաստանյան պատվիրակության կողմից ներկայացվեց տվյալներն առ այն, միայն իրանական կողմի ներկայացրած դիրքորոշումը չի արտացոլում երկկողմ գանձվող գումարների իրական պատկերը և խնդիրը համալիր քննարկումների կարիք ունի, քանի որ.

1. Հայաստանյան բեռնափոխադրողները հիմնականում մուտք են գործում ԻԻՀ-ի տարածք դատարկ, անցնում են 1-2 կիլոմետր մինչև Նորդուզի տերմինալ, բարձում բեռը և հետ վերադառնում ՀՀ՝ բարձված ԻԻՀ-ի տարածքով անցնելով ընդամենը 3-4 կիլոմետր: Իրանական բեռնափոխադրողները ՀՀ-ի տարածքով բարձված վիճակով անցնում են 300-400 կիլոմետ՝ հիմնականում հասնելով մինչև Երևան կամ տարանցելով ողջ ՀՀ-ի տարացքը դեպի Վրաստան: Այս իրավիճակում գանձվող վճարների համարժեքությունը լրացուցիչ քննարման և փոխադարձ պայմանավորվածությունների ձեռքբերման կարիք ունի:

2. Իրանական կողմից բացի 120 դոլլար գանձումից հայաստանյան բեռնափոխադրողներից պահանջվում է ԻԻՀ մուտք գործել դատարկ բաքով և վառելիքը լցավորել բաքի ամբողջ տարողությամբ Իրանում, ընդ որում բարձր գնով, և այս հանգամանքը պարտադիր է և կիրառվում են տուգանքներ՝ լիքը բաքով Իրան մուտք գործելու դեպքում: Այսինքն՝ գանձվող պարտադիր գումարը միայն 120 դոլլար չի և այլ մեխանիզմներով օրինական ճանապարհով սահմանված են լրացուցիչ ծախսեր, ինչը առաջացնում է դժգոհություններ բեռնափոխադրողներ մոտ:

3. ԻԻՀ-ում հայաստանյան բեռնափոխադրողների համար օրենսդրությամբ սահմանված՝ իրանական կողմից ներկայացված ծախսերի հաշվարկը չի համապատասխանում հայաստանյան բեռնափոխադրողների ներկայացրած իրական ծախսերին և ըստ հայաստանյան պատվիրակության տվյալների՝ հայաստանյան բեռնափոխադրողներից գանձվում են այլ գումարներ, որոնց վերաբերյալ փոխադարձ քննարկումների և, եթե այդ ծախսերը կամ վճարումները սահմանված չեն իրանական օրենսդրությամբ, ապա առկա է դրանք բացառելու անհրաժեշտություն:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը՝ հայաստանյան պատվիրակությունը իրանական կողմին ներկայացրեց մտահոգություն առ այն, որ իրանական բեռնափոխադրողներից գանձվող 152 հազար դրամը նվազեցնելու առաջարկը առանձին քննարկելը չի ապահովում բեռնափոխադրողների կողմից կատարվող վճարումների երկկողմ նվազեցման գործընթացը և քննարկումը պետք է ներառի իրանական մաքսավորների կողմից գանձվող օրենսդրությամբ չհիմնավորված գումարների, վառելիքի լցավորման պահանջի և կիրառվող տուգանքների, ինչպես նաև բեռնափոխադրումները խոչնդոտող այլ հանգամանքների ուսումնասիրությունը և վերացնելուն ուղղված համատեղ միջոցառումները:

Միաժամանակ հայաստանյան կողմը առաջարկեց իրանական կողմին հայաստանյան բեռնափոխադրողների համար ստեղծել հարթակ, որտեղ հստակ սահմանվեն իրանական կողմից օրենսդրությամբ սահմանված բոլոր վճարումները կամ բեռնափոխադրողին տրամադրել պարտադիր վճարումների ցանկ՝ որի առկայությունը հնարավորություն կնձեռի հայասանյան փոխադրողին տեղեկացված լինելու և ստվերային այլ գումարներ վճարելու պահանջի դեպքում սեփական շահերը պաշտպանելու:

8. <u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>

Պատվիրակությունների անդամները պայմանավորվեցին երկկողմ հնչեցված առաջարկությունները և մտահոգությունները ներկայացնել շահագրգիռ մարմիններին և պաշտոնյաներին, համալիր քննարկել երկկողմ բեռնափոխադրումների ընթացքում վճարվող գումարների նվազեցման հնարավորությունները և այդ մասին դիվանագիտական խողովակներով տեղեկացնել կողմերին:

Ա. Ստեփանյան

09.04 2025թ.